

Ներգործական սեռի բայերի պարագաառական արժույթը ժամանակակից հայերենում

Մուրադյան Միլվա

Հանգուցային բառեր. կառավարում, պարագաառություն, տեղի, պատճառի և նպատակի պարագաներ, հոլովաձև, կապային կապակցություն

Բայի պարագաառության մասին դիտարկումներ Տեները կատարում է «Կառուցվածքային շարահյուսության հիմունքները» աշխատության «Բայական հանգույց» գլխում՝ դրանք համարելով գործողության հանգամանքներ, որոնք արտահայտվում են մակբայներով կամ նրանց համարժեքներով¹: Ռուս լեզվաբան Ս. Կացնելսոնը նշում է, որ բայի կողմից բացված տեղերը կարող են լրացվել ոչ միայն առարկաներով, այլ նաև հանգամանքներով²:

Ժամանակակից հայերենի արժույթի հարցերը համեմատաբար ընդարձակ քննված են Գ. Ջահուկյանի կողմից: Հեղինակը, կատարելով բայերի արժույթային դասակարգում, եռարժույթ անցողական բայերի մասին դիտարկումներում ուղիղ խնդրին զուգահեռ ներկայացնում է ինչպես անտղղակի խնդիր, այնպես էլ պարագայական խնդիր լրացումները³: Հենվելով այդ դասակարգման վրա՝ սույն հոդվածում վերլուծության ենք ենթարկել ժամանակակից հայերենի բայերի կապակցելիության հնարավորությունները պարագաառական արժույթի տեսանկյունից:

Ուժեղ կառավարումը բնորոշ է հատկապես ընթացակառույթամբ օժտված բայերին, որոնց գործողության կատարման համար պարտադիր է տեղի պարագան: Այս դեպքում կարևոր դերակատարում ունի բայիմաստը, քանի որ բայը ցույց է տալիս շարժման մեջ գործողություն, իսկ շարժման համար պարտադիր պայմաններ են տեղը և ժամանակը: Քանի որ բայի արտահայտության մեջ առկա է ժամանակի քերականական իմաստը, ժամանակի պարագան պարտադիր չի լինում, ի տարբերություն տեղի պարագայի, որը, չունենալով բառային-քերականական արտահայտություն, խոսքում հանդես է գալիս պարտադիր կառավարման պահանջով⁴:

Հ. Հարությունյանը շարժում արտահայտող բայերի կառավարումը քննելիս տեղի պարագայի գոյությունը անհրաժեշտ է համարում այն բայերի համար, որոնց ցույց տված գործողության համար արտահայտչական, հաղորդակցային լրիվությունը պարտադիր է⁵: Գ. Խաչատրյանը նշում է, որ արժույթային կարևորություն ունեն ոչ թե տվյալ նախադասության մեջ ըստ անհրաժեշտության կիրառվող պարագաները, այլ բոլոր կիրառություններում միևնույն բայի բառիմաստով

¹ Տե՛ս Մ. Թենբեր, Основы структурального синтаксиса, М., 1959, էջ 117:

² Տե՛ս Ս. Կաչնելսոն, К понятию типов валентности, Вопросы языкознания, N 3, էջ 21: <http://www.ruslang.ru/doc/voprosy/voprosy1987-3.pdf>

³ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 485-487:

⁴ Տե՛ս Գ. Բ. Խաչատրյան, Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Երևան, 2000, էջ 24:

⁵ Տե՛ս Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 208-212:

պարտադիր ենթադրվող և պահանջվող պարագաները⁶:

Այսպես՝ արժույթի արտահայտության միջոցներից մեկն է տեղի պարագա-առությունը, որով աչքի են ընկնում չեզոք սեռի խնդրառությամբ արժութագուրկ բայերը, ինչպես՝ *անցնել, գալ, գնալ, զբոսնել, իջնել, բարձրանալ, հասնել* և այլն: Նրանց համեմատությամբ ներգործական սեռի բայերը փոքր թիվ են կազմում, ինչպես՝ *առաքել, բերել, զգել, կախել, մղել, ներքաշել* և այլն:

Տեղի պարագաառությամբ օժտված ներգործական սեռի բայերով կառույց-ներն ունեն կայուն *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – տեղի պարագա* կադապար, որտեղ տեղի պարագայի իմաստը կարող է արտահայտվել տեղանիշ գոյականների տարբեր հոլովաձևերով, վերջիններիս մասնակցությամբ ձևավորված հոլովակապային կապակցություններով կամ երկրորդական նախադասու-թյամբ:

- ա) Հայցական հոլովով արտահայտված տեղի պարագա պահանջող բայերից են՝ *խրել, խցկել, հրավիրել, մխրձել, սուզել* և այլն: Օրինակ՝ Դոան ետևին թաքնված մի դավադիր սուրը *խրեց* Ահարոնի *մեջքը* (ՄԽ)* ⁷: Եվ երբ *փողը խցկում էր* ծերունու *բուռը*, նա ուշքի եկավ (ՄԳ)*:
- բ) Տրական հոլովով արտահայտված տեղի պարագա պահանջող բայերից են՝ *բարդել, բարձել, ընդունել, թողնել, հենել, ներքաշել, փռել, փորագրել, քսել* և այլն: Այդ հրահանգի համաձայն մենք սկսեցինք Կողբի *քարաղ բարձել* մեր *սայլերին* (ՎԱ): Ճամփին, մի ծառի տակ տոպրակս բաց արի ու *թղթերը փռեցի գետնին* (ՎԱ):
- գ) Բացառական հոլովով արտահայտված տեղի պարագա պահանջող բայերից են՝ *արձակել, ստանալ, պոկել, վտարել, քաղել* և այլն: Օրինակ Արջի օրինակով սև *մոշ պոկեց* փշոտ *ճյուղից* ու կերավ, լիացավ (ՄԽ): Բայց *քաղեցի թփից նրան*, յարիս տարա. - Իբրև պատիժ թող թառամի կրծքիդ վրա (ՀՇ):
- դ) Ներգոյական հոլովով արտահայտված տեղի պարագա պահանջող բայերից են՝ *արգելափակել, գետեղել, ընգրկել, թաթախել, համախմբել, ներդնել, ներգրավել, ներառել, որոնել, ցանել* և այլն: Օրինակ Յուրաքանչյուր *համարում գետեղում է* հայերեն մի *երգ* (ՀՄՀ, 2, 97): Եթե կարողանանք *պայթուցիկը տեղավորել ձեռքերում*, հաշվիր, որ գործը գլուխ ենք բերել (ՄԽ):

Կան բայեր, որոնք տեղի պարագա լրացում պահանջում են գուգահեռ հոլովառությամբ՝ առանց իմաստային տարբերության: Այսպես՝ *կախել* բայը տեղի պարագա է ստանում և՛ տրական, և՛ բացառական հոլովներով: Հմմտ. Վարչու-թյան նախագահը՝ Անդրեյ Պետրովիչը, *գլխարկը կախեց պատից...* (ԳՄ) և Այսպիսով խնամքով, շտապ, առանց դանդաղելու, մեկը մյուսին հետևող շարժումներով ոտները հանելով, մարդն իր *ոտնամանները կախեց պատին...* (ԼՏ):

⁶ Տե՛ս Գ. Կ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 23-25:

⁷ Օրինակները քաղել ենք ԱԲԵՎԱԿ կայքից

(http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am):

(http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am):

Կապերից տեղի պարագայի արտահայտման միջոց են տարածական կապերը, որոնցից են՝

- ա) *առաջ*՝ Քիչ հետո, սինու վրա, *ամուսնու առաջ դրեց* նրա *պահանջածը* (ՀՄ): Աքաղաղի ծուղորուղուն *Տիգրանին դիմավորեց* Երեմիայենց *դարբասի առաջ* (ԶԴ):
- բ) *Դեպի*՝ Մի մեծ ու հոծ բազմություն սիրելի գրողին ու *դերասանին ճանապարհում էին դեպի* հավիտենական *հանգիստ* (ՌԶ): Ինձ *առաջնորդեցեք դեպի* իմ հոր *վրանը: Նրան տարան դեպի* շիկակարմիր *վրանը*: (Բ):
- գ) *Մեջ* և նրա թեք ձևերը՝ Փոքր Արարատն իր սուր *գագաթը մխրձել էր* երկնի *կապույտի մեջ* (ՎԱ): Ապա հոգնած ձին նորից առաջ շարժվեց, *կառքը* դանդաղաբայլ *տարավ* մարդկային աղմուկ–աղաղակի *թունելի միջով* (ՖՎ):
- դ) *Մինչև*: Միայն Զարիկն էր *նրան ճանապարհել մինչև կայարան...* (ԼԶ): Երկու ժամ հետո *խանը նրանց ճանապարհեց մինչև դարպասը* (ՄԽ):
- ե) *Մոտ* և նրա թեք ձևերը՝ Ստեպանը *դարպասի մոտ դիմավորեց նրան* (ՄՇ): էթե *մատուռի մոտից ձու գլորես*, կգա ու անվնաս կմտնի գյուղեգրին հողի հետ խաղացող երեխայի բուռը (ՄԳ):
- զ) *Վրա* և նրա թեք ձևերը՝ Վերցրեց ու *կավի վրա* մանր *փորագրեց*,- «Գրով շենանա տունն Հայոց, Առաքե՛լ» (ՄԽ): Արաբոն ինձ մի քանի անգամ *տարավ-բերեց* այդ *կամուրջի վրայով* և Սասնա ներքին դաշտից ձին քշեց դեպի Տալվորիկ (ԽԴ)*:
- է) *Տակ* և նրա թեք ձևերը՝ Ավին նայեց բերդանի պատրոններին, չուխայի *փեշերը հավաքեց գոտու տակ*, փափախը պինդ կոխեց գլխին (ԱԲ): Իսկ լրտեսի *դիակը* այգու միջով, թափվող *ձյան տակով*, *տարան* և դրին մենաստանի եկեղեցին (ՌՄ):

Պարտադիր պարագաստությամբ օժտված ներգործական սեռի բայերի տեղի պարագան կարող է արտահայտվել նաև երկրորդական նախադասությամբ: Օրինակ՝ Ես քունն եմ, *տար ինձ, ուր որ կամենաս* (ԼԶ): Ուստի և ես հրամայում եմ՝ ձեր *ատրճանակը դնել* այնտեղ, *որտեղից հանել եք* (ՄՌ): *Որոնեցեք հանցավորին* այնտեղ, *ուր նրան կորցրել եք* (ԴԴ):

Անդրադառնալով շարժում արտահայտող բայերի կառավարմանը՝ Հ. Հարությունյանը նշում է. «Շարժում արտահայտող բայերի մեծ մասը բազմարժույթ է՝ միաժամանակ առնում է տարբեր հոլովներով կամ հոլովակապային ձևավորում ունեցող լրացումներ. *քաղաքում փողոցներով անցնել տնից տուն...*»⁸: Այսպես՝ տեղի պարագա պահանջող բայը կարող է լինել բազմարժույթ՝ պահանջելով սկզբնակետի, բուն, անցման, վերջնակետի պարագաներ, ինչպես՝ *առաքել, արտահանել, ներմուծել, տեղափոխել, փոխադրել, արտագրել, հավաքել, տեղավորել* և այլն: Սակայն հազվադեպ են բայի՝ ենթադրվող տեղի պարագաների միաժամանակ գործածության դեպքերը: Օրինակ՝ *Կասպից ծովի վրայով, Վոլգայով Պարսկաստանից Ռուսաստան էին արտահանում* մետաքս, գնում տեղական արտադրության ապրանքներ (ՀՄՀ, 2, 651):

⁸ Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 211:

Շատ կառույցներում գործածվում է պարագաառությամբ բազմարժույթ բայերի ենթադրվող պարագաառական արժույթներից որևէ մեկը, որը կարևոր է տվյալ նախադասության իմաստային ամբողջության համար, այդ թվում՝

- ա) *սկզբնակետի տեղի պարագան* (ելման տեղի պարագա⁹): Օրինակ՝ *Մոնրովիայից արտահանում են երկաթի հանքաքար, կաուչուկ, արմավի միջուկ և յուղ* (ՀՄՀ, 8, 19): Չարենցը վերադարձավ, *գրասեղանից հավաքեց թղթերը և մեկնեց տիրոջը* (ԳԲ):
- բ) *Վերջնակետի տեղի պարագան* (ուղևորման տեղի պարագա¹⁰): Օրինակ՝ *Եվ այս ցեղն իսկույն իր Սենա գետի ափերն առաքեց...* (ՀՇ): Հայրը ունեցած դրամը հանձնեց *որդուն ու ճանապարհեց գյուղ* (ՄԽ):
- գ) *Անցման տեղի պարագան*: Օրինակ՝ Մրջյունների նման այդ *ճանապարհներով* ավտոմեքենաները *բեռ էին տեղափոխում* (ԶԽ): Այնպիսի ոգևորությամբ էր *մեզ առաջնորդում* տան *սենյակներով...* (ՄԿ):
- դ) *Բուն տեղի պարագան*: Օրինակ՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին նա իր *ավանդը ներդրեց* հաղթանակի *գործում* (ՀՄՀ, 11, 36): Շտաբի դռան *շեմին նրան դիմավորեց* ինքը՝ Երեմիան (ԶԴ):

Մի շարք կառույցներում էլ գործածվում է տեղի պարագաառու բայերի ենթադրվող պարագաառական արժույթներից երկուսը: Այստեղ ունենք հետևյալ մասնակադասարները՝

- ա) *ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – սկզբնակետի տեղի պարագա – վերջնակետի տեղի պարագա*: Օրինակ՝ *Եվ սատանայով դարձավ իմաստուն, Երկնքից երկիր առաքեց մարդուն...* (ՀՇ)*: Ներքին *հանդից* և *Սև հողից* պետք է գարին *լեռները փոխադրել* և այդ հողերում միայն ու միայն ցորեն ցանել (ԳԲ):
- բ) *Ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – անցման տեղի պարագա – վերջնակետի տեղի պարագա*: Օրինակ՝ Հաջորդ առավոտյան *նրանց* ոտքով *ճանապարհում են Սևանի լեռնանցքով Աղստաֆա...* (ԶԽ): Գիշերը խանութպանը գաղտնի *անցքով* ամբողջ *զինամթերքները փոխադրել էր* մերոնց *կողմ* (ԶԴ):
- գ) *Ներգործական սեռի բայ – ուղիղ խնդիր – սկզբնակետի տեղի պարագա – բուն տեղի պարագա*: Օրինակ՝ Քիչ հետո, նա ծոցագրպանից հանեց մի փոքրիկ գրքույկ և *թերթից մի բան արտագրեց նրա մեջ* (ԳԲ): Երբեմն նա *գրքույկներից ինչ-որ բան էր արտագրում* առանձին *թղթի վրա* և նույնպես թաքցնում... (ՄԳ):

Օրինակներից պարզ է դառնում, որ տեղի պարագան մենիմաստ չէ և տար-

⁹ Լեզվաբանության մեջ այն կոչվում է նաև *ելման տեղի պարագա* (տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր Ա, Ե., 1958, էջ 347: Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1987, էջ 249: Մ. Գյուլբուղադյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 190):

¹⁰ Լեզվաբանության մեջ այն կոչվում է նաև *ուղևորման տեղի պարագա* (տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր Ա, Ե., 1958, էջ 345: Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1987, էջ 248: Մ. Գյուլբուղադյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988, էջ 190):

բեր բայական բառակապակցություններում կարող է գործածվել տարբեր նրբիմաստներով՝ արտահայտվելով հոլովածներով և կապային կապակցություններով:

Կան մի շարք բայեր, որոնց հիմքն արտահայտված է տեղի պարագայի քերականական իմաստով, ինչպես՝ *ամանել* «ամանի մեջ լցնել», *արկղել* «արկղի մեջ դնել», *բանտել* «բանտարկել, արգելակափակել», *գետնել* «գետին գցել, գետնովը տալ, տապալել», *գնդանել* «գնդանի մեջ դնել, բանտարկել», *ծրարել* «նամակ՝ փաստաթուղթ և այլն ծրարի մեջ դնել և փակել» և այլն: Այս բայերի պարագաառությանը խոչընդոտում է իրենց կազմությունը, քանի որ ենթադրվող տեղի պարագան արդեն իսկ նրանց հիմքն է: Օրինակ՝ Օհանես աղան *ծրարը գրպանեց* (ԳՄ): Նա *նամակը ծրարեց* և ուղարկեց յուր սպասավորի ձեռքով (Բ): Եվ այս որ տեսան, Լուռ վրա հասան Ու *վանդակեցին* Հաղթված *առյուծին*... (ՀՇ):

Այդ է պատճառը, որ վերը նշված բայերի պարագաառությունը այլ ընդգրկում ունի: Այս բայերով կառույցներում տեղի պարագան այլ արժեք ունի՝ բայի հիմքը հանդիսացող տեղի պարագան մասնավորեցնելու, ոճական կամ փոխաբերական իմաստով գործածվելու: Օրինակ՝ Սառը ու հարատև անձրևը *բանտել էր պուլսեցիներին* իրենց *տներում*... (ԿՓ): Եվ նա գրպանից հանեց հարյուր ֆրանկ, ճիշտ հարյուր, շտապ բացեց դրամապանակը և հարյուր *ֆրանկը ծրարեց դրամապանակի խորքում* (ՄԳ)*: ...ինչո՞ւ է *հոգիս վանդակել* իր վանդակաչափ *բարձրավանդակում* ու չի թողնում դուրս գալ... (ՄԿ):

Մի շարք բայեր էլ իրենց իսկ պահանջած տեղի պարագայի հետ միասին ձեռք են բերել մեկ բառային արժեք՝ վերածվելով համադրական բարդությունների, ինչպես՝ *հրատուգել* «կրակի մեջ սուգել», *հիմնաշրջել* «հիմքից շրջել՝ շուռ տալ», *մտապահել* «մտքում պահել», *ընծայագրել* «ընծայվող իրի վրա մակագրել», *գետառաքել* «գետի հոսանքով ուղարկել՝ փոխադրել», *լուսանցանշել* «լուսանցքում նշում կատարել», *կենտրոնադրել* «կենտրոնում դնել՝ տեղավորել», *մտազննել* «մտքում զննել՝ քննել», *հայրենավտարել* «հայրենիքից վտարել» և այլն: Սակայն սրանք կարող են պահանջել մեկ այլ տեղի պարագա, որը սովորաբար սովյալ բարդության բաղադրիչ հանդիսացող պարագայից տարբերվում է իմաստով: Օրինակ՝ Հրաժեշտի պահին կուշտ ծիծաղեցին, Քլինգգորը այդ ամենը *մտապահեց* իր սրտի *խորքում* (ՀՀ): Արտահանման վարկի ժամկետները կախված են ապրանքների բնույթից, ներմուծողի վճարունակությունից և *մուրհակները բանկերում* ժամանակին *հաշվեգրելուց* (ՀՄՀ, 2, 133):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղի պարագայից գատ՝ հայերենում ուժեղ և պարտադիր կառավարման եղանակով կապակցվում են նաև նպատակի և պատճառի պարագաները: Ներգործական սեռի բայերի շարքում առանձնանում են այնպիսիք, որոնցով արտահայտված գործողության կատարման համար կարևորվում է նաև պատճառի և նպատակի քերականական իմաստ արտահայտող պարագաների առկայությունը: Այսպես՝ *գոհաբերել*, *հանդիմանել*, *շնորհավորել* բայերի գործողության իրականացման համար անհրաժեշտ հանգամանք է նաև նպատակի պարագան: Օրինակ՝ *Հանդիմանում եմ քեզ հանուն* մեր *հաշտության*, Որ չես բերել ինձ հյուր շուշանագեղ Նուարդային (ՆՁ)*: Առավոտյան զրնգուն ձայնով *շնորհավորեց* իր *ընկերներին* կոմբինատի *բացման առթիվ* ու հայերեն գոչեց... (ՄԽ):

Նպատակի պարագան կարող է արտահայտված լինել նաև երկրորդական նախադասությամբ և դերբայական դարձվածով: Օրինակ՝ *...սակայն նրան խրախուսել էին, որ շարունակի աշխատակցությունը* (ՍԶ): - Ա՛խ՝ էն ի՞նչ բերան էր, որ *ձեզ օրհնեց, որ էղպես ազգ ունենաք, էղպես հավատ, էղպես եկեղեցի, էղպես սուրբ օրենք* (ԽԱ):

Իսկ *անիծել, դրվատել, գովել, դատապարտել, նախատել, կշտամբել* և որոշ այլ բայերով արտահայտված գործողության ամբողջական լինելու համար անհրաժեշտ է պատճառի պարագան: Օրինակ՝ *Բայց այդ մտքի համար Ինքն իրեն անիծեց* անողորմ (ՄԽ): *Բանաստեղծին* առաջին հերթին պիտի *դրվատել* գրքի հենց այս *խորագրի ու ենթախորագրերի համար...* (ՊՍ):

Պատճառի պարագան կարող է արտահայտված լինել նաև երկրորդական նախադասությամբ և դերբայական դարձվածով: Օրինակ՝ *Ու նրա այդ նվագի վրա հարևանները նորից հավաքվում, լսում են նրան ու գովում, որ այդքան լավ է նվագում* (ՍԶ)*: *Իրեն չէր նախատում, որ ասաց սրտինը* (ՄԽ): *Նա ինքն իրեն մեղադրեց՝ ռազմաճակատ կամավոր եկած Աշխենին կշտամբելու համար* (ՄԽ): *Արվա-Սևան կառույցն ավարտելու առթիվ շինարարության մասնակիցներին շնորհավորեց ՍՄԿԿ Կենտկոմը* (ՀՄՀ, 13, 223):

Այսպիսով, վերոնշյալ բայերով կառույցների՝ ավարտուն, ամբողջական և ամփոփ միտք արտահայտելու համար պարտադիր հանգամանքներ են նաև նպատակը և պատճառը:

Սույն հոդվածի շրջանակներում առանձնացնելով պարագա լրացումները՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների: Արժույթի արտահայտության միջոցներից մեկն էլ պարագաառությունն է, որը պայմանավորված է բայի բառիմաստով: Հայերենում որոշ ներգործական սեռի բայերի հետ պարտադիր կառավարման եղանակով կապակցվում են ոչ միայն տեղի, այլ նաև պատճառի և նպատակի պարագաները: Խոսքը վերաբերում է հատկապես այն բայերին, որոնցով ձևավորված նախադասության բովանդակության պլանը կտուժի առանց պատճառի և նպատակի պարագաների առկայության:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՄՀ, 2 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, 1976:
2. ՀՄՀ, 3 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, 1977:
3. ՀՄՀ, 8 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, 1982:
4. ՀՄՀ, 11 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, 1985:
5. ՀՄՀ, 13 - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 13, 1987:

ԱՐԵՎԱԿ-Ի ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ – Ակսել Բակունց, ԳԲ - Գարեգին Բես, ԳՄ - Գուրգեն Մահարի, ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան, ԶԽ – Զորայր Խալափյան, ԼՏ - Լև Տոլստոյ, ԽԱ – Խաչատուր Աբովյան, ՀՇ - Հովհաննես Շիրազ, ՀՍ – Հմայակ Սիրաս, ՄՌ - Մայն Ռիդ, ՄԳ - Մուշեղ Գալշոյան, ՆԶ – Նաիրի Զարյան, ՄԽ - Մերո Խանգաղյան, ՍԶ – Ստեփան Զորյան, ՎԱ – Վախթանգ Անանյան, ՌԶ – Ռազմիկ Դավոյան, ՊՍ – Պարույր Սևակ:

Валентность глаголов действительного залога при управлении обстоятельством в современном армянском

Мурадян Сильва

Резюме

Ключевые слова: управление, способность управления обстоятельством, обстоятельство места, цели и причины, падеж, союзные сочетания

Одним из выражений валентности является способность управления обстоятельством. Большинство глаголов движения многовалентны, одновременно могут иметь несколько обстоятельств. Предложения с глаголами движения действительного залога имеют стабильную структуру: глагол действительного залога - прямое дополнение - обстоятельство места, в которых значение последнего может быть выражено падежными или предложно-падежными формами пространственных существительных. Обстоятельство места выражается пространственными предлогами: у, к, в, до, на, под и т.д.

Глагол, требующий обстоятельство места, может быть многовалентным с обстоятельствами начала, основного действия, перехода, конца. Связь с обстоятельством реализуется в основном с глаголами движения, которые требуют обстоятельство места. Но в современном армянском языке с точки зрения валентности некоторые глаголы действительного залога устанавливают связь как с обстоятельством места, так и с обстоятельствами цели и причины. Речь идет о тех глаголах, для выполнения действий которых необходимо наличие обстоятельств с грамматическим значением причины и цели. Отмеченные обстоятельства могут быть выражены подчиненным предложением и причастным оборотом.

The Valency of Transitive Verbs According to Adverbial-Adjunction in Modern Armenian

Muradyan Silva

Summary

Key words: *government, adverbial-adjunction, adverbials of place, reason and purpose, case, postpositional phrases*

One of the characteristic features of valency is the ability to control the adverbial. The connection with the adverbial directly depends on the lexico-semantic category of the verb. All the verbs of movement are at least monovalent according to adverbial-adjunction. A number of these verbs are multivalent, as they may demand different complements at the same time: adverbials of starting point, origin, transition, endpoint. Active clauses with verbs endowed with adverbial-adjunction are characterized as a valency pattern where the transitive verb requires an obligatory direct object and adverbial of place, expressed with different morphological cases or postpositional phrases. The connection between the verb and adverbial is realized especially with the verbs of movement, which demand an adverbial of place. In modern Armenian, some transitive verbs demand both an adverbial of place and adverbials of reason and purpose according to valency. The grammatical behavior of these obligatory adverbials is determined to a great extent by the lexico-grammatical properties of the verb that controls them.